

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 10-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, արձակուրդներից հետո ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում սկսվում է 1969—70 ուսումնական տարին:

Առավոտյան ժամը 10-ին ճեմարանի դահլիճում տեղի է ունենում ճեմարանի բացումը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ճեմարանի վերաբացման հանդիսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և ողջ ուսանողությունը:

Որոշյալ ժամին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով մուտք է գործում ճեմարանի հանդիսությանց սրահ: Դահլիճը հոտնկայս դիմավորում է Նորին Սրբությանը:

Հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը երգում է «Որք զարդարեցին» և «Աշակերտք Քրիստոսի» շարականները: Ճեմարանի վերակացու արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից սերմնացանի առակը, իսկ Գ դասարանի ուսանող Վրեժ Նաջարյանը՝ Նարեկացու սուրբ Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Ճեմարանի տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քհն. Մարուքյանը հանդես է գալիս գրավոր մի ուղերձով և ողջունում հոգևոր ճեմարանի 25-րդ ուսումնական տարեշրջանի բացումը: Տեր հայրը հայցում է Աստուծո օգնականությունն ու Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ հոգևոր այս ասպարեզի կրթական, հոգևոր աշխատանքների արդյունավորության, ուսանողների հոգեկան-իմացական կարողությունների աճման համար:

Հանդիսության վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, ողջունում դասախոսներին և ուսանողությանը և Իր գոհունակությունն է հայտնում, որ Աստուծո օգնականությամբ այս տարի ևս հոգևոր ճեմարանի դուռները բաց են մեր ժողովրդի այն զավակների առաջ, որոնք ցանկանում են ծառայել Աստուծո սեղանին և հայ ժողովրդի հոգևոր սպասավորությանը նվիրվել, սիրով և զոհողությամբ:

Այնուհետև Հայոց Հայրապետը իմաստալից և ոգեշունչ խրատական է տալիս ուսանողությանը, թելադրելով, որ նրանք լինեն և՛ հավատքի, և՛ հայրենասիրության խանդավառ հոգիներ, ունենան իրենց հոգում հանապազ Աստծո սերն ու նվիրումը ժողովրդին, դառնալու համար մի օր Տիրոջ այգու սպասավորներ, «մշակք առանց ամօթոյ», բանան իրենց մտքերը Աստուծո լույսին և օրհնության, հայոց պատմության հրաշքին ու պատգամին:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ից և խմբովին երգված «Հայր մեր»-ից հետո, տեսչական ու դասախոսական կազմը և ուսանողությունը մոտենում են և համբու-

ղով ստանում Նորին Սրբության օրհնությունը:

Այս տարի Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հրավերով հոգևոր ճեմարանի տեսչությունը ստանձնեց տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը Հյուսիսային Ամերիկայից Մայր Աթոռ ժամանեց սեպտեմբերի 13-ին, շաբաթ օրը:

Սեպտեմբերի 16-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը հոգևոր ճեմարանի դահլիճում, պաշտոնապես, դասախոսական կազմին և ուսանողությանն է ներկայացնում նոր տեսչին՝ տ. Շնորհք վարդապետին՝ մաղթելով նրան ուժ և կարողություն, արդյունավորությամբ գլխավորելու ուսումնա-դաստիարակչական պատասխանատու գործը հոգևոր ճեմարանում, սերտ ու համերաշխ գործակցությամբ դասախոսական կազմի:

Ապա խոսք է առնում նորընտիր տեսուչը, խորին շնորհակալություն և երախտագիտություն հայտնում Վեհափառ Հայրապետին, իր հանդեպ ցույց տրված բարձր վստահության համար, իր կողմից ևս վստահեցնում է և հայցում Աստուծո օգնականությունն ու խնդրում Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ արդյունավորելու համար այն ծանր, պատասխանատու, բայց և հաճելի և քաղցր պարտականությունը, որ դրվում է իր ուսերի վրա, որպես հոգևոր ճեմարանի ղեկավարի:

Այնուհետև տեսուչ հայր սուրբը շեշտում է իր պարտականությունների կատարման ճանապարհի վրա սերտ համագործակցությամբ դասախոսական կազմի, Վեհափառ Հայրապետի ղեկավարության ներքո, աշխատասիրությամբ ուսանողության, սիրո այն եղբայրական մթնոլորտում, որ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանն է:

Ճեմարանի ուսումնական ծրագրում այս տարի նախատեսվել է երկու նոր առարկաներ՝ էկումենիզմ և հայրենագիտություն: Դասախոսական կազմը մնում է նույնը: Հրավիրվել է նաև դասախոսելու ծանոթ աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը:

Այս տարի ճեմարանում ընդունվել են 25 նոր աշակերտներ: Ուսանողության ընդհանուր թիվն է 54՝ բաշխված Ա, Բ, Գ դասարանների և Ա, Բ, Գ լսարանների վրա:

Սեպտեմբերի 10-ին ճեմարանի հարկի տակ հնչեց 1969—70 ուսումնական տարվա առաջին զանգը: